

**1.2.2. Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2002թ. հունվար-ապրիլին, ընթացիկ գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 42.0 մլրդ. դրամ, որը 2001թ. մակարդակը գերազանցել է 1.5%-ով, 2002թ. ապրիլի համախառն արտադրանքը կազմել է նախորդ ամսվա 91.8%-ը (համադրելի գներով):

Հանրապետությունում շարունակվում են գարնանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները: Օպերատիվ տվյալներով, 2002թ. մայիսի 1-ի դրությամբ, կատարվել է ընդամենը 33771 հեկտար գարնանացան մշակաբույսերի ցանք, որը 2001թ. ցուցանիշը զիջել է 47954 հեկտարով:

Գարնանացանի նվազումը 2001թ. համեմատ պայմանավորված է, հիմնականում, մթնոլորտային տևական տեղումներով (հորդառատ անձրևներ, կարկուտ, իսկ առանձին վայրերում՝ նույնիսկ ձյուն), ինչն էլ խոչնդոտել է գարնանացանի բնականոն ընթացքը:

**Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի գարնանացանի ընթացքը հանրապետությունում, մայիսի 1-ի դրությամբ**

*(հեկտար)*

Մշակաբույսերի անվանումը	Ցանվել է		2002թ. .2001թ. նկատմամբ,%
	2002	2001	
Հացահատիկային և հատիկարնդեղենային մշակաբույսեր	21197	63454	33.4
Կարտոֆիլ	8134	11856	68.6
Բանջարանոցային մշակաբույսեր	2748	3047	90.2
Բոստանային մշակաբույսեր	423	706	59.9
Կերային մշակաբույսեր	1231	2379	51.7
Այլ մշակաբույսեր	38	283	13.4
<b>ԸՆԴԱՄԵՆՆ ԶԶ</b>	<b>33771</b>	<b>81725</b>	<b>41.3</b>

**Անասնապահական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2002թ. մայիսի 1-ի դրությամբ**

*(հաշվարկային տվյալներով)*

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) <sup>1</sup> , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2002թ.	2002թ. 2001թ. նկատմամբ,%	2002թ.	2002թ. 2001թ. նկատմամբ,%	2002թ.	2002թ. 2001թ. նկատմամբ,%
Արագածոտն	2.2	100.0	13.0	98.5	4.5	90.0
Արարատ	1.7	106.2	9.0	103.4	5.8	92.1
Արմավիր	1.5	107.1	7.4	101.4	5.8	75.3
Գեղարքունիք	3.5	109.4	21.2	100.9	5.7	83.8
Լոռի	2.1	95.5	12.9	99.2	3.2	91.4
Կոտայք	2.3	109.5	11.3	102.7	63.3	114.3
Շիրակ	2.9	116.0	17.2	102.4	5.8	92.1
Սյունիք	1.6	106.7	9.9	99.0	2.7	93.1
Վայոց ձոր	0.8	114.3	4.5	97.8	2.1	110.5
Տավուշ	1.6	100.0	8.3	100.0	4.3	93.5
ք.երևան	0.3	150.0	0.6	100.0	14.4	123.1
<b>ԸՆԴԱՄԵՆՆ ԶԶ</b>	<b>20.5</b>	<b>106.8</b>	<b>115.3</b>	<b>100.7</b>	<b>117.6</b>	<b>104.8</b>

Գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի հաշվարկային տվյալներով, 2002թ. հունվար-ապրիլին իրացվել է 20.5 հազ. տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն, ինչը գերազանցել է 2001թ. ցուցանիշը 1.3 հազ. տոննայով կամ 6.8%-ով, կաթի արտադրությունը՝ 0.8 հազ. տոննայով կամ 0.7%-ով, ձվինը՝ 5.4 մլն. հատով կամ 4.8%-ով:

<sup>1</sup> Ներառյալ ներքին սպառումը: